ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 20 >> փետրվարի 2012թ. N 02

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.15-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարարական ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 16.02. 2012 թվականի թիվ15/120 գրությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2012 թվականի աշխատանքային ծրագիրը՝ 2012 թվականի հունվար - փետրվար ամիսներին տեղացած առատ ձյան և գարնանային անձրևների հետևանքով հնարավոր հեղեղումներից և գետերի վարարումից մարզի բնակչության գույքը, գյուղատնտեսական հողատարածքները և ցանքատարածությունները պաշտպանելու, հեղեղումների անվտանգ անցկացումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու, մարզում գետերի ու հեղեղատարների առավել վտանգավոր հատվածների հուների մաքրումն ու ափերի ամրացման միջոցառումների ու աշխատանքների ցանկը կազմելու նպատակով .

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին/Դ.Սամսոնյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Ախուրյան-Արաքս>> ՓԲԸ-ի տնօրենին /համաձայնությամբ/, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարարական ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, օպերատիվ բաժնի պետ Ջ.Բարսեղյանին և բնակչության պաշտպանության բաժնի պետ Պ.Եփրեմյանին /համաձայնությամբ/ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3. Հանձնաժողովին /Դ.Սամսոնյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված ուսումնասիրությունների և աշխատանքների կատարման մասին 15 օրյա ժամկետում զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /պետ Վ.Մկրտչյան/՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի 2012 թվականի
20 մարտի թիվ 08 Կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Դ.Սամսոնյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Ա. Այվազյան - Հայասատնի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Ս.Բաղդասարյան - Հայասատնի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Վ.Աբրահամյան - Հայասատնի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Գ.Մելիքյան - Հայասատնի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Մ.Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Վ. Միրզախանյան	- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
Կ. Մարգարյան	- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ